ԿԱՐԾԻՔ

Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն պատմություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Աննա Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսությունը նվիրված է մանկավարժության ժամանակակից կարևորագույն խնդիրներից մեկին:

Հանրակրթության բարեփոխումների արդի փուլում, մանկավարժական ժամանակակից մոտեցումների համատեքստում ակներև է դարձել, որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման որոշ տեսանկյուններ՝ այդ թվում նաև մանկավարժական պայմանների առաջադրման, դրանց նորովի իմաստավորման և մեթոդաբանական հիմնավորման կարիք ունեն:

Այս տեսանկյունից քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որի նպատակը տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանների բացահայտումը և ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիրի մշակումն է:

Հետազոտությունը գրված է տրամաբանորեն ծրագրված պլանով, ունի սոցիալ-մանկավարժական նշանակություն, քանի որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման հիմնահարցը դիտարկվում է նրա սոցիալական ակտիվության, հանրամշակութային իրազեկության, ինքնառեֆլեքսիայի, ինքնազարգացման, կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից:

Ատենախոսության գիտատեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման հիմնախնդիրը մակարդակային տիրույթում սոցիոլոգիական, հոգեբանամանկավարժական, մեթոդական տեսանկյուններից դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ:

Ելնելով սրանից՝ ատենախոսության հեղինակը այն գիտական համոզմանն է, որ տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի

ինքնագնահատականի ձևավորման խնդրի լուծումը կրթության կարևոր նպատակներից մեկը դարձնելու դեպքում կրթության գործընթացը կնպաստի, որ նա հասկանա և գնահատի իր սոցիալական դերը սոցիումում, ճանաչի իր սեփական հնարավորություն-ները, կկարողանա ինքնիրացվել իր ծավալած գործունեության բոլոր ձևերում և իրադրություններում:

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, միմյանց լրացնող և միմյանցից բխող երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

«Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկավարժության մեջ» խորագրով առաջին գլխում հանգամանալից ներկայացված և վերլուծված են պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում հայ և արտերկրի փիլիսոփայական ու մանկավարժական մտքի ներկայացուցիչների գաղափարաբանությունը, մեթոդաբանական, հայեցակարգային մոտեցումներն անձի ինքնագնահատականի ձևավորման հիմնահարցի վերաբերյալ: Ներկայացված են կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գիտամեթոդական նախադրյալները: Ելնելով վերլուծության արդյունքներից և իր բազմամյա մանկավարժական փորձից ատենախոսը հանգել է այն գիտական հետևությանը, որ իր և այլոց կողմից երեխայի հնարավորությունների, տաղանդների ճանաչումն ու գնահատումը համարվել են նրա զարգացման առաջընթացի խթանիչներ և նրա ինքնագնահատականի ձևավորման գերակա գործոններ:

Հետազոտության հիմնախնդրի մեթոդաբանության տեսանկյունից կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման բովանդակային և գործառնական հիմունքների քննությունը ևս ուշագրավ վերլուծություններ է պարունակում երեխայի հոգեբանական առանձնահատկությունների, մտածողության, մանկավարժական ներգործության բովանդակային նոր բնութագրերի, սոցիալական փորձի ձեռք բերման և ինքնագնահատականի պահանջմունքի ձևավորման վերաբերյալ:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում որոշակիացված և բնութագրված են կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման առանձնահատկություն-ներն ու դրդապատճառները: Այս ենթագլխի վերլուծությունները, մասնավորապես հետազոտության արդյունքում կրտսեր դպրոցականի ինքնագնահատման ձևավորման դրդապատճառների բացահայտումը ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն

գիտական նորույթի տեսանկյունից, այլև, առհասարակ, դիտարկվող «ինքնագնահատում» հասկացության էության և կառուցվածքի ընկալման առումով:

Ատենախոսության «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները» խորագիրը կրող երկրորդ գլխում հոգեբանամանկավարժական մեթոդաբանական և հայեցակարգային մոտեցումների հիման վրա ատենախոսի կողմից բացահայտվել, բնութագրվել և գիտականորեն հիմնավորված են կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի էությունն ու նրա ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները: Նշված գործոնների բացահայտումն ու արդյունքների վերլուծությունը հնարավորություն են տվել ատենախոսին որոշակիացնելու և հիմնավորելու կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման մանկավարժահոգեբանական պայմանները:

Երկրորդ ենթագլխում դիտարկված է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ազդեցությունը սովորողի առողջության վրա: Բնութագրված են կրտսեր դպրոցականի համարժեք ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մտածողության տեսակները, որը հիմք է հանդիսացել ատենախոսի կողմից գնահատականի և ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող մեթոդական և վարժանքների համալիրի մշակման և տարրական դպրոցում ներդնման համար:

Հակապես արժեքավոր է երրորդ ենթագլխում ներկայացված ատենախոսի կողմից մշակված կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման արդյունավետությունը ապահովող մանկավարժական պայմանները, որոնք ատենախոսը սահմանել է ելնելով նոր գնահատման համակարգի պահանջներից:

Երրորդ գլխում դիտարկված և վերլուծված է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում: Բնութագրված և հիմնավորված է ուսուցչի դերը կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման գործում: Այս ենթագլխում ատենախոսը գործնական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա առանձնացրել է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման աստիճանները ըստ փորձարկվողների կարծիքների, ինչպես նաև ցածր ինքնագնահատականի պատճառները:

Երրորդ ենթագլխում ներկայացված են կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի դիտարկման արդյունքները ծնող-աշակերտ «զուգահեռ հարցման» մեթոդով:

Առանձնակի արժեքավոր է և էական գիտագործնական նշանակություն ունի ատենախոսության չորրորդ ենթագլխում ներկայացված կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության կառուցվածքային բաղադրիչների բնութագիրը, ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման սկզբունքների բացահայտումը, մեթոդների և մոդելի առաջադրումը. դրանք կհարստացնեն մանկավարժության տեսությունը գիտական նոր դրույթներով:

Հետազոտությունը եզրափակում է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման մեթոդական համալիրի և մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը: Արդյունքները համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը: Մշակված հարցաթերթիկներն ընդգրկուն են, հարցերին տրված պատասխանները հանգամանալից վերլուծվել և համակարգվել են ըստ իմաստային-բովանդակային դրսևորումների: Ներկայացված տրամագրերը տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփումն են, արժևորում են հեղինակի եզրակացություններն ու փորձարարության արդյունքները, մշակված մեթոդական համալիրի և մոդելի մանկավարժական արդյունավետությունը: Եզրակացություններն արտացոլում են առաջադիր վարկածի իսկությունը և հետազոտության խնդիրների իրականացումը:

Աշխատանքի ընդհանուր արժանիքների թվում պետք է նշել, որ այն տրամաբանորեն ավարտուն է, ինքնուրույն, ամբողջական և համակարգված, պարունակում է հիմնախնդրի շրջանակներում արժեքավոր տեսական վերլուծություններ, ունի գիտական նորույթ, կիրառական նշանակություն: Հիմնախնդրի ոլորտում ստացվել են գիտամեթոդական հիմնավորված արդյունքներ, որոնք նոր մոտեցումներ են կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի արդյունավետ ձևավորման առումով: Ատենախոսությունն արտացոլում է հեղինակի մեթոդաբանական, մասնագիտական, հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու գիտահետազոտական կարողությունները,

հիմնախնդրի ոլորտում աշխատանքային բազմամյա փորձը: տպագրված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այնուհանդերձ կուզենայինք ներկայացնել որոշ դիտարկումներ՝

1. Ատենախոսության մեթոդաբանական հիմքերի վերլուծություններում հստակ չի երևում դրանց նկատմամբ ատենախոսի անձնական կարծիքը կամ մոտեցումը:
2. Հետազոտության նպատակը կարելի էր ավելի կոնկրետացնել:
3. Ատենախոսությանում առկա են տեխնիկական վրիպակներ:

Այսպիսով, Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն եվ պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյան

Պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մ. Իսպիրյան

14.10.2023թ.